**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

Պատվիրատուն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ստորև ներկայացնում է իր կարիքների համար վերականգնողական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-25/6 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 30.06.2025թ կնքված № ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-25/6-2 ծածկագրով պայմանագրում 2026 թվականի ապրիլի 8-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

**Փոփոխության առաջացման պատճառ**: Գլխավոր պայմանագրով նախատեսված կատարման ենթակա աշխատանքների, այդ թվում՝ 2026 թվականին կատարման ենթակա աշխատանքների նոր՝ փոփոխված ծավալաթերթ-նախահաշվի և վճարման ժամանակացույցի հաստատում:

**Փոփոխության նկարագրություն:** Պայմանագրում կատարվել է փոփոխություն և 2026 թվականի ապրիլի 8-ին կնքվել է համաձայնագիր, որով ավելացվել են Պայմանագրով կատարման ենթակա աշխատանքների ընդհանուր ծավալները և ավելացվել է Պայմանագրի ընդհանուր գինը, հաստատվել են Պայմանագրով նախատեսված, ներառյալ 2026 թվականին կատարման ենթակա աշխատանքների նոր՝ փոփոխված ծավալաթերթ-նախահաշիվը և Պայմանագրով նախատեսված կատարման ենթակա աշխատանքների դիմաց նոր՝ փոփոխված վճարման ժամանակացույցը:

**Փոփոխության հիմնավորում:** Հիմք է ընդունվել ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 2-րդ, 3-րդ ենթակետերը, գնման պայմանագրի 8.5 կետը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀԿԳՄՍՆԲՄԱՇՁԲ-25/6» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արմինե Սահակյանին:

Հեռախոս՝ 10 599699 (456)

Էլ. փոստ՝ armine.sahakyan@escs.am

Պատվիրատու՝ **ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն**